

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևավորել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3658

С192бн297

ԱՍԱԼԻՆ

ՏՐՈՅՉԻԶՈՒ

թէ

ԼԵՆԻՆԻԶՈՒ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԻՒՆԻԱՆ
ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ
Ակադեմիա
ԽԱՆՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՀ

ՀԿ 33

ԱՆ - 99



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — Խ 192.

ՅԵՐԵՎԱՆ — 1924.

~~Ա786~~

ՏԿ52
Մ7-99

Ը1926Ն297

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐԴՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ բՈԼՈՐ յԱՆՔՆԱՐԻ, մԻԱցե՛ր

Հաջակ
Հաջակ

ԱՍԱԼԻՆ

28 JUN 2005

20 NOV 2009

ՏՐՈՑԿԻԳ

թէ

ԼԵՆԻՆԻԳ

(ճառ՝ արտասանված Համառուսական պրոֆմիութ. կինոդրամիքի
ֆրակցիալի պլանումին, նոյեմբերի 19-ին)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 192.

ԺԵԽՎԱԲ — 1924.

5 AUG 2013

3658

ՏՐՈՑԿԻԶՄ ԹԵ ԼԵՆԻՆԻՑՄ

Ընկերներ. յես կսահմանափակվեմ մի քանի տառապելների մերկացումով, առասպելներ, վոր տարածում են ընկ. Տրոցկին և նրա համախոհները Հոկտեմբերյան ապատամբության մասին և ընկ. Տրոցկու այդ ապատամբության մեջ ունեցած գերի, կուսակցության և Հոկտեմբերի նախապատրաստության մասին. Միաժամանակ կզոշափեմ Տրոցկիզմը, վրապես առանձին իդիոլոգիա, վոր անհաջողի և կենինիզմի հետ, նաև կուսակցության անելիքները ընկ. Տրոցկու դրական վերջին յերույթի առիթով:



Պետհրատի II տպարան Ցերմանուա

Shipping 5,000

ՀԱԿՏԵՄՔԵՐՅԱՆ ԱՊԱՄԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՄԵՐ ՅԵՎ Ա.Ռ.ՍՊԵԼՆԵՐ

Սմենից առաջ Հոկտեմբերյան ապստամբության ժամանակաշինքում կուսակցության անդամների ըրջանում յեսանդուն տարածվում էն լուրեր, վոր իբր թե կենտրոնում ամբողջ կազմով գեմ է յեղել 1917 թ. հոկտեմբերի ապստամբության: Պատմում էն, վոր հոկտեմբերի 10-ին, ինքը կենակում վորոշում է ընդունել ապստամբությանը կազմակերպելու, կենտրոնի մեծամասնությունը սկզբում արտահայտվել է ապստամբության գեմ, բայց այդ ժամանակ իբրև թե նխատի սենյակը ներս է ընկել մի բանվոր և ասել. «Դուք վորոշումն եք ընդունում ապստամբության գեմ, բայց յետ ձեզ ասում

եմ, — հակառակ ամեն բանի, այնուամենայնիվ, ապօստամբությունը կլինի»: Յեկ իրու թե կենտկոմը այս սպառնալիքից վախեցած՝ նորից դրել և ապստամբության հարցը և վճռել ապստամբություն կազմակերպել: Այս հասարակ լուր չի: Այս մասին գրում և Զո՞ն Ռիդը իր «Տաս որ» գրքում: Այս լուրերը պաշտպանվում են և ընկ: Տրոցկու գրական վերջին յելույթներուի: Հազիվ թե կարիք կա ատացուցելու, վոր այդ և նման արարական հեքիաթները չեն համապատասխանում իրականության, վոր այդպիսի բան չի յեղել կենտկոմի նիստին և չեր կարող լինել: Մենք կարող եյինք ուշք չդարձնել այդ անհեթեթ լուրերին, սակայն նկատի ունենալով ընկ: Տրոցկու վերջին յելույթները, այդ առասպեկներին ուշ չդարձնել չի կարիք: Այդպիսի առասպեկներով են այժմ աշխատում դաստիարակել յերիտասարդությունը և, գրախտարար, այդ կողմից վորոշ հետևանքների հասել են արդեն: Նկատի ունենալով այս այդ անհեթեթ լուրերին յես պետք և հաշկագրեմ իսկական փաստեր:

Փ Ա Ս Ե Ր

Վեցնում եմ կենտկոմի 1917 թ. հոկտեմբեր 23-ի նիստի արձանագրությունը: Ներկա են՝ Անին, Զինովի, Կամենի, Ստալին, Տրոցկի, Սվերդլով, Ռերիցկի, Զերժինսկի, Կալանաայ, Բուրնով, Սակոնիկով, Լոմպով: Քննվում ե՝ «ընթացիկ մոմենտը և ապստամբության խնդիրը»:

Անինի բանաձեռ՝ ապստամբության մասին, ընդունվում և մեծամասնությամբ՝ 10 ընդդեմ 2-ին կենտկոմն այդ նիստում ընտրում է քաղաքական կենտրոն

ապստամբությունը ղեկավարելու համար, քաղաքական ըյուրու անունով, վորի կազմի մեջ մտնում են ընկերներ Լենին, Զենովի, Ստալին, Կամենի, Տրոցկի, Սակոնիկով և Բուրնով:

Այս արձանագրությունը ցրում ե մի քանի առասպել, վոր կենտկոմը մեծամասնությամբ, իր թե, զեմ և յեղել ապստամբության և վոր կ. կ. ապստամբության խնդրում կանգնած եր, իբր թե պառակտման առջև: Արձանագրությունից պարզ ե, վոր անմիջական ապստամբության հակառակորդները՝ ընկերներ կամենեն ու Զենովիկը մտել են ապստամբությունը ղեկավարող քաղաքական մարմնի մեջ ապստամբության կողմանկիցների հետ միասին: Վոչ մի պառակտման մասին խոսք չի յեղել և չեր կարող լինել:

Ընկ: Տրոցկին հավատացնում ե, թե հանձինս ընկերներ կամենեկի և Զինովիի Հոկտեմբերին մենք ունեցել ենք սոց.-դեմոկրատների կուսակցության աջ թե: Անհասկանալի յե, թե ինչպես ապա այդ գեպքում կուսակցության մեջ պառակտում չեղավ: Կուսակցությանը հայտնի յեն թե ինչպես ընկ: Անինը անխնա եր դեպի սոցիալ-դեմոկրատները: Բնիկ, Անինը և վոչ մի բոռք չեր համաձայնի, վոր կուսակցության մեջ, այն ել կարեսը դիրքերում, լինեն սոցիալ-դեմոկրատարար տրամադրված ընկերներ: Խնչնվ բացատրել ուրեմն, վոր կուսակցությունը չպառակտվեց: Նրանով, վոր, չնայած տարածայնության, մենք ունեյինք, հանձինս այդ ընկերների, հին բայց եկի — լենինյաններ:

Անցնենք այն առասպեկին, վոր վերաբերում ե ընկ: Տրոցկու առանձին դերին Հոկտեմբերյան ապստամբության մեջ: Յես հեռու եմ այն մտքից, վոր-

պեսզի բացասեմ ընկ. Տրոցկու, անկասկած, կարևոր գերը ապստամբության մեջ, բայց պետք ե ասեմ, վոր ընկ. Տրոցկին վոչ մի առանձին գեր չի խաղացել և խաղալ չեր կարող, կինելով Պետրոգրադի խորհրդի նախագահը, նա կատարում եր միայն կամքը կուսակցական մարմինների, վորոնք զեկավարում ենին ընկ. Տրոցկու յուրաքանչյուր քայլը:

Ներցնենք Կենտկոմի ճետեյալ նիստի (1917 թ. Հոկտեմբեր 29) արձանագրությունը: Ներկա յեն կենտկոմի անդամները, նաև ներկայացուցիչներ կենին զրադարարակի կոմիտեյից, զինվորական կազմակերպությունից, գործարանային կոմիտեներից, պրոֆմիություններից և յերկաթուղարյիններից: Ներկա յեն նաև, բայց կենտկոմի անդամներից, երիտնելո, Շոտման, Կալինին, Վոլոդարսկի, Շլյապնիկով, Լացիո և ուրիշներ, ընդունել 25 մարդ: Քննվում ե ապստամբության հարցը գործական, կազմակերպչական կողմից:

Ընդունվում ե ընկ. կենինի բանաձեռ՝ ապստամբության մասին, 20-ով ընդում 2-ի, 3-ի ձեռնպահությամբ: Ընտրվում ե գործոն կենտրոն՝ ապստամբության կազմակերպչական զեկավարության համար, վորի մեջ մտնում են Ավերգով, Ստալին, Զերժենսկի, Բուրնով և Ռոբցիկի: Այսպիսով այսուղ չի ընկել ապստամբության «ներշնչողը», գլխավոր գեմքը և «միակ ղեկավարը»—ընկ. Տրոցկին: Այս ինչպես հաշտեցնել Տրոցկու առանձին գերի մասին պատվող կարծիքի հետ: Այստեղ վոչինչ չկա տարրորինակ, քանի վոր վոչ մի առանձին գեր թե կուսակցության և թե Հոկտեմբերյան ապստամբության մեջ չի խաղացել և չեր կարող ի աղալ ընկ. Տրոցկին, վոր, Հոկտեմբերի շրջա-

նում համեմատաբար, նոր մարդ եր մեր կուսակցության մեջ: Ինչպես բոլոր պատասխանառու աշխատավորները, նա հանդիսանում եր կենտկոմի և նրա մարմինների կամքը կատարողը: Զրուցները Տրոցկու առանձին գերի մասին—առասպել են, վոր տարածում են «կուսակցական» հաճոյակատար խնամինները:

Սա չի նշանակում թե Հոկտեմբերյան ապստամբությունը չի ունեցել իր ներշնչողը: Դա ընկ. կենինն է: Այդ են ասում փաստերը:

Թող այդպնս լինի, ասում են, — բայց չի կարելի ժխտել վոր Տրոցկին լավ և կովել Հոկտեմբերի շրջանում:

Ճիշտ ե: բայց Հոկտեմբերի շրջանում լավ կըու վում եյին անգամ ձախ եսերները (սոց. հեղափոխ.), վոր այն ժամանակ կանգնած եյին բայց կինների կողքին: Ընդհանրապես, պետք ե առել, վոր հաղթական ապստամբության շրջանում դժվար չե լավ կովել:

Իսկական հեղափոխականը հանդիսանում ե վոչ թե նա, ով արիություն և ցուցանանում հաղթական ապստամբության շրջանում, այլ նա, ով կարողանում ե արիություն ցուցահանել հեղափոխության նահանջի շրջանում: Շատ ցավալի ե, բայց փաստ ե, վոր ընկ. Տրոցկուն պակասում եր արիությունը Բրեստի և հեղափոխության ժամանակաշրջությունների շրջանում: Ընկ. Տրոցկու կարծիքով պրոլետարական հեղափոխության հիմնական դասը նրանումն ե, վորովեսզի քնով չանցնենք Հոկտեմբերի ժամանակի: Դա ճիշտ ե: Այս պնդումն իր մեջ բովանդակում է միայն մասնիկը հեղափոխության դասերի մասին յեղած ձըշմարտության: Ամբողջ ձշմարտությունը նրանումն ե,

վորպեսզի քնով չանցնենք վոչ միայն հեղափոխության հարձակման որերին, այլև նահանջի որերին, յերբ հեղափոխությունը անաջողություններ ե կրում թեթե ընկ. Տրոցկին տատանվեց Բրեստի շրջանում, յերբ բանը քիչ եր մնում համեր իշխանությունը հանձնելուն, ուստի նա պետք ե հասկանա, վոր կամենկի և Զինովիլ հոկտեմբերյան սխալները այստեղ բոլորովին գործ չունեն:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտակի քննենք Հոկտեմբերի նախապատրաստության պատմությունն ըստ շրջանների:

ԿՈՒՍՈՎԱՑՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կուսակցության եռո վորոնումների օրշանք (մարտապրի), Բնորոշ գիծը այդ շրջանի համար այն փաստն ե, վոր միաժամանակ գոյություն ունեն բուրժուազիայի դիկտատուրան և պրոլետարիատի ու գյուղացիության դիկտատուրան, ըստ վորում վերջինս վստահությամբ ե վերաբերվում առաջինին և կամովին իշխանությունը զիջում ե բուրժուազիային: Լուրջ միջադեպեր յերկու դիկտատուրաների միջև դեռ չը կան կասկայն «կուսակտային կոմիսիա»:

Դա մի խոշորագույն բեկում եր Ռուսաստանի պատմության մեջ, և անորինակ հեղաշրջում մեր կուսակցության պատմության մեջ. կառավարությունը անմիջապես տապալելու նախանեղափոխական պլատֆորման պարզ եր և վորոշ բայց պայքարի նոր պայմաններին արդեն չեր հարմարում:

Անհրաժեշտ եր, վոր կուսակցությունը նոր որինաւացիա ունենար պայքարի նոր պայմաններում: Կուսակցությունը (նրա մեծամասնությունը) դեպի նոր որինաւացիան գնում եր խարխափելով: Նա ընդունեց այն քաղաքականությունը, վոր խորհուրդները ճնշում գործ դնեն ժամանակավոր կառավարության վրա խաղաղության խնդրում՝ չեր ուղում միանգամից «Պուլիստարիատի և գյուղացիության դիկտատուրա» հին լոգունգից անցնել—«Հշխանությունը խորհուրդներին» նոր լոգունգին: Այս կիսատ քաղաքականությունը նկատի ուներ Խորհուրդներին հարավորություն տալ վոր նրանք կոնկրետ կերպով հաշտության խնդիրներում տեսնեն ժամանակավոր կառավարության խկական իմպերիալիստական բնույթը և այդպիսով նրան պոկել վերջնից: Բայց դա խորապես սխալ քաղաքականություն եր, վորովհետեւ առաջ եր բերում խաղաղասիրական իլլյուզիաներ, ջուր եր ածում պաշտպանողականների ջաղացին և դժվարացնում մասսաների հեղափոխական գաստիարակությունը: Այն ժամանակ այդ սխալ գիրքին ես կողմնակից ելի ուրիշների հետ միասին, դրանից միանգամայն հրաժարվեցի ապրիլի կեսերին, կենինի թեզիսները ընդունելով:

Թանօրություն.— (Հայտնի յե, վոր ընկ. Զինովիը, վորին Տրոցկին պատրաստ ե գարձնել Հիլֆերդինիկին և ետևող, լիսվին համամիտ եր կենինի տեսակտին):

Անհրաժեշտ եր գրության նոր ըմբռնում և այդ նոր ըմբռնումը կուսակցությանը տվեց ը. կենինը ապրելուն թեղիսներում: Կային այն ժամանակ տարածայնություններ կուսակցության և ընկ. կենինի միջին

Կային: Տարածայնությունները տեղյին յերկու շարժից վոչ ավել: Լենինգրադի կազմակերպության համաշխառային կոնֆերենցիան, վոր բնդունեց Լենինի թեզիսները, շքչակետ յեղավ մեր կուսակցության զարգացման համար: Համասուսական ապրիլյան կոնֆերենցիան համառուսական մասշտաբով ամբողջացրեց Լենինգրադի կոնֆերենցիայի գործը, կուսակցական միասնական դիրքի շուրջը խմբելով կուսակցության ^{9/10} մասը:

Այժմ, Դարբի անց, ընկեր Տրոցկին շարախնդում և բայց լիկների հին տարածայնությանց ասիթով, տարածայնությունները պատկերացնելով վորպիս համարյա թե յերկու կուսակցության պայքար բայց կիզմի ներսում: Ընկ. Տրոցկին բանը չափազանցնում, ուղացնում ե, քանի վոր կուսակցությանը տարածայնություններն ապրեց առանց վարել ցնցումի:

Կուսակցությունը կլիներ կաստա, և վոչ հեղափոխական կուսակցություն, յեթե թույլ չտար իր մեջ մտքի յերանդներ, քանի վոր հայտնի ե, մենք տարածայնություններ ունեցել ենք և անցյալում, որինակ Յ-րդ Պետական Դումայի որերին, վորոնք, սակայն, չխանգարեցին մեր կուսակցության միության:

Ի՞նչ զիրք ուներ այն ժամանակ ընկ. Տրոցկին, վոր հիմա չարախնդում և բայց կիկների հին տարածայնությունների ասիթով:

Ընկ. Տրոցկու գրվածքների, այսպէս անվանված, խմբագիրը՝ Լենիները, հավատացնում ե, թե Տրոցկու «Ամերիկյան համակները» (1917 թ. մարտ) լիովին նախագուշակել են Լենինի «Նամակներ հետից»—շարքը (1917 թ. մարտ), վոր ընկ. Լենինի ապրիլյան թեզիս-

ների հիմքն են կազմում: Ընկ. Տրոցկին չի առարկում այս համեմատության դեմ, այլ ընդունում և այն, ըստ յերկույթին, հարբեկակալությամբ Բայցընկ. Տրոցկու նամակները բոլորովին նման չեն ընկ. Լենինի նամակներին վոչ վոգով, վոչ ել յեղրակացություններով, վորովեան լիովին արտացոլում են ընկ. Տրոցկու հակարայլեկիկյան լոգունզը՝ «առանց թագավորի», բայց կառավարությունը բանվորական», վոր նշանակում և հեղափոխություն առանց գյուղացիության: Ինչպէս բացատրել այն, վոր ընկ. Լենինը արտասահմանից զարդարության մեջ, յերկրորդ որը հարկ համարեց սահման գծել իր և Տրոցկու միջև: Ում հայտնի չեն ընկ. Լենինի բաղմաթիվ հայտարարությունները, թե ընկ. Տրոցկու այդ լոգունզը հագիսանում և փորձ թուչել գյուղացիության չվերջացած շարժման վրայից, վոր նշանակում և բանվորական կառավարության կողմէց իշխանությունը բռնազրագիլու խաղ:

Ընդհանուր ի՞նչ բան կա ընկ. Լենինի, բայց կիկյան թեզիսների և ընկ. Տրոցկու հակարայլեկիկյան գիրքի միջև: Վարտեղից և ծագում մարդկանց մեջ փոքրիկ խրճիթը Մոնրեալի հետ համեմատելու սերը:

ՈՎԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՀԱՂԹԱՎԱԿՆԵՐԸ ՔԱՂԱՔԱ- ՑԻԱԿԱՆ ԿՐՎԼԻ ՖՐՈՆՏՆԵՐՈՒՄ

Ծանօթուրքունկ — Առասպեկների թվին պիտի դասել այն շատ տարածված վերսիան, վոր իրը թե ընկ. Տրոցկին և հանգիսանում քաղաքցիական կովի քրոնակներում տարած հաղթանակների միակ և գլխավոր կաղմակերպիչը:

Հանուն ճշմարտության պիտի հայտնեմ, վոր այդ կարծիքը միանգամայն չի համապատասխանում իրականության:

Յես հեռու եմ ընկ. Տրոցկու՝ քաղաքացիական կըռվում ունեցած կարևոր դերը ժխտելու մտքից, ըայց պիտի հայտնեմ կտրականապես, վոր մեր հաղթանակները կազմակերպողի բարձր պատիվը պատկանում է վոչ թե առանձին անհատների, այլ մեր յերկրի առաջավոր բանվորների մեծ կոլեկտիվին — Ռուսաստանի կոմունիստական կուսակցության: Ավելորդ չի լինի բերել մի քանի որինակներ, Դուք գիտեք, վոր Խորհըրդային հանրապետության պիտի թշնամիներ համարվում եյին Կալչակն ու Դենիկինը,

Մեր յերկիրն ազատ շունչ քաշեց միայն այդ յերկու թշնամիներին հաղթելուց հետո, Պատմությունը վկայում է, վոր մեր զորքերը այդ յերկու թշնամուն ջարդել են հակառակ ընկ. Տրոցկու ծրագրերի: Խոքներդ դատաեցեք:

Կալչակի մասին: Բանը 1919 թ. ամառն եր: Մեր զորքերը արշավում են Կալչակի վրա և կովում Ուփայի մոտ: Կենտկոմի նիստին ընկ. Տրոցկին առաջարկում է՝ կանգնեցնել արշավանքը Բելայա գետի գծի վրա (Ուփայի մոտ), թողնելով Ուրալը Կալչակի ձեռքում, վերցնել զորքի մի մասը և փոխադրել հարավային ճակատ: Տեղի յեն ունենում բռուն վիճաբանություններ: Կենտկոմը չի համաձայնում ընկ. Տրոցկուն՝ գտնելով վոր չի կարելի Կալչակի ձեռին թողնել Ուրալը՝ իր զործարաններով և յերկաթուղային ցանցով, ուր նա հեշտությամբ կարող եր ույժ հավաքել և նորից յերկալ Վոլգայի վրա: Հարկավոր եր նախ Կալչակին քշել Ուրալյան լեռ-

նաշղթայի այն կողմը, Սիբիրի ստեպները (տափաստանները) և ապա ույժեր փոխադրել հարավի, Կենտկոմը մերժում ե ընկ. Տրոցկու ծրագիրը: Վերջինս հրաժարական և տալիս: Կենտկոմը հրաժարականը չի ընդունում զիմ: հրամանատար Վացետիսը, վոր կողմանից եր ընկ. Տրոցկու ծրագրին, — հրաժարվում է: Նրա տեղ ըստում և նոր զիմավոր հրամանատար Կամեները: Այս մոմենտից ընկ. Տրոցկին հեռանում է արևելյան ճակատի գործերի ուղղակի մասնակցությունից:

Դենիկինի մասին: Բանը 1919 թ. աշնանն է: Հարձակումը Դենիկինի վրա չի աջողվում: Դենիկինը վերցնում է Կուրսկը, մոտեցել է Արյոլին: Ընկ. Տրոցկին հարավային ճակատից կանչվում է Կենտկոմի նիստին: Կենտկոմը դրությունը համարում է վտանգավոր և փորձում է հարավային ճակատն ուղարկել զինվորական նոր աշխատավորներ, յետ կանչելով ընկ. Տրոցկուն: Այդ ընկերները պահանջում են, վոր ընկ. Տրոցկին չի առանցի հարավային ֆրոնտի գործերին: Ընկ. Տրոցկին հեռանում է հարավային ճակատի գործերին: Ընկ. Տրոցկին հեռանում է հարավային ճակատի գործերին ուղղակի մասնակցելուց և այդ ֆրոնտի գործողությունները, մինչև այն ժամանակ, յերբ մենք վերցրինք Ռուսովը (Դոստի վրա) և Աղեսան, կատարվում են առանց ընկ. Տրոցկու:

Թող փորձեն հերքել այս փաստերը:

ՄԱՍԱԿՐՆԵՐԻ ՄՈՒԼԿԱԶԱՑԻԱՆ

Մասսաների հեղափոխական մոբիլիզացիայի օրշանը (մայիս-սպոտսոս): Այս շրջանի բնորոշ զիմը պետք է համարել կրիզիսի սրվելը և խորհուրդների ուժամանակավոր կառավարության միջև յեղած անկա-

յուն հավասարակշռության խախտումը, հավասարակշռություն, վոր գոյություն ուներ նախորդ շրջանում:

Յերկիշխանությունը անհանդուրժելի եր դարձել յերկու կողմի համար ել. իշխանությունը նոր դաստկարգի ձեռքն անցնելու հարցը դառնում է որվա հերթական խնդիր: Կային այն ժամանակ տարածայնություններ մեր կուսակցության մեջ: Կային: Բայց դրանք ունեին բացառապես գործնական բնույթ: Իրավացի չե ընկ. Տրոցկին, յերբ հավատացնում ե, թե ապրիլյան ցույցը կենինքրազում առաջ բերեց տարածայնություններ կենտկոմի ներսում: (Կենտկոմը բացարձակապես միաբան եր այդ խնդրում և դատապարտում եր մի խումբ ընկերներ՝ ժամանակավոր կառավարությունը ձերքակալիու փորձը այն մոմենտին, յերբ խորհուրդներում և բանակում բայլշնիկները կազմում եյին փոքրամասնություն): Բացարձակապես անիրավացի ե ընկ. Տրոցկին, յերբ պնդում ե, թե կենինի նախաձեռնած փորձը՝ «ցույց կազմել հունիսի 9-ին—կենտկոմի աջ անդամների կողմից համարվեց ավանդություն»: Յեթե ընկ. Տրոցկին իր պատմությունը չգրեր բատ Առևիանովի, նա ճիշտ կերպով կիմանար անշուշտ, վոր հունիսի 9-ի ցույցը հետաձգվեց ընկ. կենինի լիակատար համաձայնությամբ, և հետաձգումը պաշտպանեց ինքը ընկ. կենինը ընդարձակ ձառնով կենինդրազի կոմիտեյի հայտնի նիստում:

Միանդամայն անիրավացի ե ընկ. Տրոցկին, յերբ ասում ե, թե հուլիսյան գինված ցույցի առիթով վորքարկան տարածայնություններ կային կենտկոմի ներսում: Ընկ. Տրոցկին հերցուրում է, կարձելով, թե կենտկոմի ղեկավար խմբակի մի քանի անդամները

«հուլիսյան դեպքը պիտի նկատեյին իբրև վասակար ավանտյուրա»: Ընկ. Տրոցկին, վոր այն ժամանակ կենտկոմի մեջ չեր, այլ հանդիսանում եր միայն մեր Խորհրդություն բանագնացը (պարլամենտարը), կորող եր չիմանալ, վոր կենտկոմը հուլիսյան ցույցը համարումը էր վորպես միջոց հակառակորդին շոշափելու, վորը կենտկոմը և ընկ. կենինը չեյին կամննում և չեյին մտածում ցույցը դարձնել ապստամբություն այն մոմենտին, յերբ մայրաքաղաքների Խորհրդությունները պաշտպանողականների կողմն եյին: Շատ հնարավոր ե, վոր բայլշնիկներից վորին մեկը խկապես փնտինթար հուլիսյան պարտության առիթով: Սրանից յեզրակացները վոր իբր թե «աջերը» և իբր թե կենտկոմի անդամները դեմ են յեղել, — նշանակում ե, անաստվածորեն ազտվազել պատմությունը:

Անիրավացի յե ընկ. Տրոցկին, յերբ հայտարարում ե թե գեն. Կարնիլովի ապստարության որերին կուսակցության վերին խավերի մի մասի մեջ ձգտում եր նկատվում բրոկ կազմել պաշտպանողականների հետ—ժամանակավոր կառավարությանը աջակցելու: Կենտկոմում վոչ մի տարածայնություն չի յեղել Կարնիլովի ապստամբության որերին:

Հուլիսյան պարտությունից հետո կենտկոմի և ընկ. կենինի միջև ծագեց խկապես տարածայնություն՝ Խորհրդությունների վիճակի ինքորի շարժը: Հայտնի յե, վոր ընկ. կենինը, կամննալով կուսակցության ուշքը կենտրոնացնել ապստամբության պատրաստության վրա (Խորհրդություններից անկախ), նախադպուշացնում եր Խորհրդություններով վոգերվելուց, գտնելով վոր Խորհրդությունները, տպականված պաշտպանողականների կողմից, դարձել

Են արգեն գտատարկ տեղ: Կենսակոմը և կուսակցության 6-րդ համագումարը բոհնիքին ավելի զգույշ դիմ, վը ռենդով վոր, հիմք չկա խորհուրդները թարմացնելու գործը վերացած համարել: Կարնիլովի յելույթը ցուց տվեց, վոր այդ վճիռը աւզիդ եր: Այս տարածայնությունը գործուն (ակտուալ) նշանակություն չունեցավ կուսակցության համար: Հետապայտմ ընկ, Անինն ընդունեց, վոր 6-րդ համագումարը իրավացի յնք: Հետաքրքրական ե, վոր ընկ: Տրոցիկին այս տարածայնության պահից չի բռնել և չի ուսցրել այն հրեշտավոր չափերով: Միաբան, կուսակցություն, վոր կանգնած ե մասսաների հեղափոխական մոբլիցիացի կենտրոնում, — այս և կուսակցության գրության պատկերն ալդ շրջանառմ:

ԳՐՈՒՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գրութի կազմակերպման ռազմական գործը (Սեպտեմբեր
Հոկտեմբեր): Այս շրջանի բնորոշ գիծը տիտաք և հա-
մարել կրիզիսի արագ աճումը, իշխանների կատարյալ
գլխակորուսությունը, եսերների և մենշերիկների մեկու-
սացումը մասսաներից և տատանվող տարրերի մասսա-
յական անցումը բայց եկիների կողմը: Հարկ և նկատել
հեղափոխության տակտիկայի ինքնորդինակ առանձնա-
հատկությունը այդ շրջանում: Այդ առանձնահատկու-
թյունն այն է, վոր հեղափոխությունն իր հարձակման
գրեթե յուրաքանչյուր քայլն աշխատում և անել պաշտ-
պանության ձեր ներքո: Անկատկած է, վոր զորքը կե-
նին զրադից դաւրս հանելու մերժումը՝ հեղափոխու-
թյան հարձակման լուրջ քայլ եր, և այնուամենայնիվ
այդ հարձակումը արվեց կենին զրադը արտաքին թշ-

Նամու հնարավոր հարձակումից պաշտպանելու լուգունգով: Հեղափոխությունը իր հարձակողական գործողությունները կարծես դիմակավորում եր պաշտպանության պատրվակով, վորպեսզի տատանվող տարրերին հեշտությամբ առնի իր շրջապիծը:


Այդ շրջանում կային տարածայնություններ կենտրոնի ներսում: Կային: Յեզ վոչ անհան:

Ապստամբության խնդրի շուրջը յեղած տարածայնությանց մասին յես արդեն խոսեցի:

Այժմ անհրաժեշտ է կանգ առնել յերեք խնդրի
վրա՝ սախապարլամենտին մտսնակցելու, խորհուրդ-
ների՝ ազգային ժողովության մեջ ունեցած դերի և ապ-
ստամբության ժամանակի; Դա ավելի անհրաժեշտ է
նրա համար, վոր ընկ. Տրոցկին իր խոյանքի մեջ՝ դնել
իրեն աչքի ընկնող տեղ, «պատահաբար» խեղաթյուրել և
կենինի տեսակետը վերջին յերկու խնդրի նկատմամբ:

Անկասկած, նախապարլամենտի խնդրի շուրջը յեղած տարածայնությունները լուրջ բնույթ ունեցին Նախապարլամենտի նպատակն եր՝ ողնուել բուրժուազիային Խորհուրդները յետին գիծը մղելու, հիմք դնելով բուրժուական պարլամենտարիզմին։ Այս պայմաններում Բնչնշանակությունն կարող եր ունենալ բայց լեկիկների մասնակցությունը նախապարլամենտին։ Վոր վոչ այլ ինչ, յեթե վոչ պրոլետարական մասսաները մոլորության մեջ ձգել նախապարլամենտի խսկական կերպարանքի նկատմամբ։ Դրանով եւ զլխավորապես, բացարիում և այն կրթությունը. վորով ընկ. Լենինը իր նամակներում մտրակում է նախապարլամենտին մասնակցելու կողմանակիցներին։

Նախապարհամենուին մասնակցելը լուրջ սխալ եր,



բայց սխալ կլիներ կարծել ինչպես անում ե ընկ. Տրոցկին, թե մասնակցության կողմանիցները նախապարամենտ գնացին որդանական աշխատանք կատարելու նպատակով, «բանվորական շարժումը սոցիալ-դեմոկրատական հոնի մեջ դնելու» նպատակով, Դա բոլորովին սխալ ե: Դա ճիշտ չե: Յեթե դա ճիշտ լիներ կուսակցությանը չեր աջողվի մի շնչով վերացնել սխալ՝ նախապարալամենտից գեմոնստրատիվ կերպով հեռանալու ճանապարհով: Այնուհետև թույլ տվեք ուղղել մի փոքրիկ անձտություն, վոր սպրդել ե «Տրոցկու գրվածքների» խմբագիր Լինցների տեղեկության մեջ, վոր վերաբերում ե բայց կելյան ֆրակցիայի նիստին, վորը և լուծել եր նախապարալամենտի խնդիրը: Լինցները հաղորդում ե, թե նիստի գեկուցողներն եյին Կամսնեն ու Տրոցկին: Ճիշտ չե: Զեկուցողները չորս հոգի եյին. յերկուսը կողմնակից եյին նախապարալամենտը բոյկոտի յենթարկելուն (ընկ. ընկ. Տրոցկին և Ստալին), յերկուսը՝ մասնակցելուն (ընկ. ընկ. Կամենկ և Նոգին):

Ընկ. Տրոցկու գործն ավելի վատթարանում ե, յերբ նա շոշափում ե Լենինի՝ ասլստամբության ձևի խնդրի նկատմամբ բռնած դիրքը: Ընկ. Տրոցկու մոտ ստացվում ե այնպես, վոր ըստ Լենինի կուսակցությունը Հոկտեմբերին իշխանությունը պիտի վերցներ «Խորհրդից անկախ և նրա թիկունքում», Քննադատելով ընկ. Լենինին վերագրված այս անհեթեթ մտքերը, ընկ. Տրոցկին խաղու և լինում, ծնելով հետևյալ ներողամիտ ֆրազը. «Դա կլիներ սխալ»: Տրոցկին անձտություններ և ասում Լենինի մասին և աղավագում ե նրա՝ խորհուրդների գերի (ապստամբության մեջ) նկատ-

մամբ ունեցած հայացքը: Կարելի յե բերել մի կույտ գոկումենտներ այն մասին, վոր ընկ. Լենինը առաջարկել ե իշխանությունը վերցնել Լենինդրադի կամ Մոսկվայի Խորհուրդների միջոցով, և վոչ թե նրանց թիկունքում:

Բանը լավ չե և այնտեղ, յերբ ընկ. Տրոցկին քննության և առնում կենտկոմի և Լենինի գիրքը՝ ապստամբության ժամանակի խնդրի մասին, Ընկ. Տրոցկին պնդում ե, թե հոկտեմբերի 10-ին կենտկոմի նիստում ընդունվեց բանաձև այն մտքով, թե ապօստամբությունը պետք ե տեղի ունենա հոկտեմբերի 15-ից վոչ ուշ: Դուրս ե գալիս, վոր կենտկոմը ապստամբության ժամանակ նշանակել ե հոկտեմբերի 15-ը, իսկ հետո ինքը խախտել ե իր փորոշումը, ապստամբության ժամանակը հետաձեկելով հոկտեմբերի 25-ը: Կանգ առնենք այդ բանաձևի վրա:

Կենտկոմի բանաձևը հոկտեմբերի 10-ից:

«Կենտկոմը գտնում ե, վոր ոռուսական հեղափոխության միջազգային դրությունը, ուղղմական դրությունը, և այն, վոր պրոլետարական կուսակցությունը մեծամասնություն ե շահել Խորհրդում, այս բոլորը՝ դյուլացիական ապստամբության և ժողովրդական վստահությունը մեր կուսակցության կողմն անցնելու (Մոսկվայի ընտրությունները) հետ միասին և, վերջապես, յերկրորդ կարնիլովյան մի նոր ապստամբության բացահայտ նախապարաստությունը՝ որակարգի հարց են դարձնում զինված ապստամբությունը: Դա կամ վիճակը, վոր զինված ապստամբությունը անխուսափելի յե և միանգամայն հասունացած, կենտկոմն առաջարկում ե կունակցության բոլոր կազմակերպություն-

Ներին դեկավարվել սրանով և այս տեսակետից քննելու լուծել բոլոր գործնական խնդիրները»:

Կենտկոմի՝ պատասխանատու աշխատավորների հետ միասին ունեցած խորհրդակցության - բանաձեռ (Հոկտեմբեր 16-ից):

«Ժողովը միանգամայն վողջունում է և ամբողջապես պաշտպանում Կենտկոմի բանաձեռ, կոչ և անում բանվորների և զինվորների կազմակերպություններին՝ ամենակողմանի կերպով զինված ապստամբության յեռանգուն պատրաստություններ տեսնել և աջակցել դրա համար Կենտկոմի կողմից ստեղծված կենտրոնին, ու լիազես վստահ և, վոր Կենտկոմն ու Խորհուրդը ժամանակին ցույց կտան յելույթի բարենպաստ մոմենտը և նպատակահարմար միջոցները»:

Տեսնում եք, ընկ. Տրոցկուն դավաճանել ե իր հիշողությունը ապստամբության ժամանակի և Կենտկոմի՝ ապստամբության մասին ընդունած բանաձեռ նկատմամբ Միանգամայն անիրավացի և ընկ. Տրոցկին, յերբ պնդում ե թե Լենինը թերագնահատում եր մեր լեգալությունը Խորհուրդներում և Կենինը չեր հասկանում համառուսական Խորհուրդների համագումարի կողմից Հոկտեմբերի 25-ին իշխանությունը վերցնելու լուրջ նշանակությունը և իբրև թե հենց այդ պատճառով Լենինը պնդում եր իշխանությունը վերցնել մինչև Հոկտեմբերի 25-ը: Լենինն առաջարկում եր իշխանությունը վերցնել մինչև հոկտեմբերի 25-ը նախ այն պատճառով, վորոնետև հականեղափոխականները կարող ելին ուղած ժամանակ Լենինագրագը հանձնել արտաքին թշնամուն, ինչ վոր բարձրացող ապստամբությունը արնագամ կաներ, այդ նկատումով ել յուրա-

քանչյուր որ թանգ եր: Յերկրորդ, նրա համար, վոր սխալը կենինզրադի Խորհրդի (վոր նշանակել և հայտարարել եր ապստամբության որը հոկտեմբերի 25) այլ կերպ չեր կարող ուզովել, քան փաստական ապստամբությամբ մինչև ապստամբության այդ լեզար ժամանակամիջոցը: Լենինն ապստամբությանը նայում եր ինչպես արվեստի վրա, և չեր կարող չմանալ վոր ապստամբության որվա մասին իրազեկ թշնամին անպայման կաշխատի պատրաստվել այդ որվան համար, այդ նկատումով ել անհրաժեշտ եր կանխել թշնամուն, այսինքն ապստամբությունն սկսել վորոշված ժամկետից առաջ: Գլխավորապես դրանով ե բացարձում այն կրքոտությունը, վորով մարտկում եր Լենինը իր նամակներում հոկտեմբերի 25-ը ֆետիշ (կուռք) դարձնողներին: Դեպքերը ցույց տվին, վոր Լենինը միանգամայն իրավացի եր:

Հոկտեմբերի նախապատրաստության մասին յեղած առասպելների բանն այսպես ե:

ԻՆՉՈՒՄԻՆ Ե ՏՐՈՅՑՈՒ ՇԵԼՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԸ

Մենք խոսեցինք այն առասպելների մասին, վոր տարածում են ընկ. Տրոցկին և նրա համախոհները կուսակցության դեմ, Հոկտեմբերի և նրա նախապատրաստության մասին, ու հերքեցինք այդ առասպելները: Բայց մի հարց ընկ. Տրոցկու ինչին ելին պետք այս առասպելները, ինչո՞ւ համար ելին ընկ. Տրոցկու վրական նոր յելույթները: Ինչո՞ւմն և իմաստը, նպատակը այդ յելույթների ընդունում կուսակցության: Այժմ, յերբ կուսակցությունը չի ցանկանում դիսկուսիա ունենալ յերբ կուսակցությունը ծանրաբեռնված

Ե րազմաթիվ անհետաձգելի խնդիրներով, յերբ կուսակցությունը կարիք ունի միաբան աշխատանքի մեր տնտեսությունը վերականգնելու—ընկ. Տրոցկին հավատացնում ե—սա անհրաժեշտ և Հոկտեմբերը ուսումնասիրելու համար: Բայց մի՞թե չի կարելի Հոկտեմբերն ուսումնասիրել առանց մի ավելորդ անգամ աքացիկու կուսակցությունը և նրա գեկավարին—Լենինին: Ըստ յերեսութիւն այստեղ ուրիշ նպատակ կա, և դա կայանում ե նրանում, վոր ընկ. Տրոցկին իր գրական յելույթներով փորձ և անում պայմաններ նախապատրաստել լենինիզմը տրոցկիզմով փոխարինելու: Ընկ. Տրոցկուն հարկավոր ե փառազրկել կուսակցությունը և նրա կազրեր, վորպեսզի գրանից հետո անցնի լենինիզմը փառազրկելուն և ապա մեջտեղ քաշի տրոցկիզմը, վորպես պրոլետարական միակ իդոլոգիա:

ՏՐՈՑԿԵԶՄԻ ՅԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՒԹՅՈՒՆԸ

Տրոցկիզմը ներկայացնում է յերեք առանձնահատկություն, վորոնք անհաշտելի հակասության մեջ են դնում նրան լենինիզմի հետ: Նախ, տրոցկիզմը պերմանենա (անընդհատ) նեղափոխության թեորիա յի, վոր հեղափոխությունը պատկերացնում ե առանց հաշվի առնելու աղքատ գյուղացիության, վորպես նեղափոխական ույժի: Ընկ. Տրոցկու պերմանենա նեղափոխությունը, ինչպես ընկ. Լենինին և առում, նշանակում է թռչել անցնել գյուղացիական շարժման վրայից, նշանակում ե իշխանությունը գրավելու խաղ:

Նման նեղափոխությունը, յեթե փորձենք կիրառել, կվերջանա անխուսափելի անշղողությամբ, վորով

հետեւ դա ուսումնակցությամբ կանչատեր իր դաշնակցից—աղքատ գյուղացիությունից:

Յերկրորդ, Տրոցկիզմը անվատահռություն և դեպի բայլշեփելյան կուսակցականությունը, նրա միաձուլությունը, նրա՝ ոպորտյունիստ տարրերի նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքին: Տրոցկիզմը կազմակերպչական շրջանում մի թեորիա ե, զորի համաձայն հեղափոխականներն ու ոպորտյունիստները կարող են կենացել և խմբավորումներ ունենալ միևնույն կուսակցության մեջ:

Յերրորդ, արոցկիզմը անվատահռություն և դեպի բայլշեփելյի լիդերները, փորձ նրանց վարկարեկելու և փառազրկելու: Յես չեմ ճանաչում կուսակցության մի հոսանք, վոր կարողանար համեմատվել տրոցկիզմի հետ՝ լենինիզմի լիդերներին կամ կուսակցության կենտրոնական հաստատությունները վարկարեկելու գործում:

Ի՞նչպես պատահեց, վոր ընկ. Տրոցկին, վորն իր յետու ունի այնպիսի անհամելի բեռ, այնուամենայնիվ հոկտեմբերյան շարժման որերին հայտնվեց բայլշեփելյերի շարքերում: Դա պատահեց այն պատճառով, վորովհետև ընկ. Տրոցկին հրաժարվել եր այն ժամանակ իր բեռից, թագցրել եր պահարանում: Առանց զրան լուրջ աշխատակցություն ընկ. Տրոցկու հետ—կլիներ անհնարին: Մենշևիկների հետ միաբանելու թեորիան արդեն ջախջախված եր և նեղափոխության կողմից դեն շպրտված, վորովհետև բայլշեփեկների և մենշևիկների միջև զինված պայքարի միջոցին ել ինչ խոսք կարող ե լինել միաբանության մասին: Ընկ. Տրոցկուն մնում եր ընդունել միայն այդ թեորիայի անպետքության փաստը: Պերմանենա նեղափոխության թեորիային

պատահեց նույն անհաճո պատմությունը, վորովհետեւ բայլշկիներից վոչ-վոք չեր խորհում փետրվարյան հեղափոխության յերկրորդ որոն իսկ իշխանությունը անմիջապես գրավելու մասին, և ընկ. Տրոցկին չեր կարող չիմանալ, վոր բայլշկիները թույլ չեն տա իրեն, ընկ. Լենինի խոսքերով ասած, «իշխանության գրավում խաղալ»: Ընկ. Տրոցկուն մոռւմ եր միայն ընդունել բայլշկիների քաղաքականությունը, վոր տարգում և Խորհուրդներում ազգեցություն ձեռք բերելու և գյուղացիությունը նվաճելու համար:

Ինչ վերաբերում ե տրոցկիզմի յերրորդ առանձնահատկության՝ անվատահություն գեղափ բայլշկիկյան լիդերները, դա, բնական և պետք է հնորին զիծը մըդը առաջին յերկու առանձնահատկությանց բացարձակ տապալման պատճառով:

ԱՅՍ ՌՈԼՈՐԻՑ Ի՞ՆՉ ԽՄԱՏ

Մի խրատ: Լենինյանների տեական աշխատակցությունը ընկ. Տրոցկու հետ հստակոր ե այն ժամանակ միայն, յեր նա կհրաժարվի իր հին բենից և ամրողջովին կմիանալ լենինիզմին: Բայց այս խրատը, ինչպես յերեսում և չոզնեց տրոցկիզմին: Տրոցկիզմի հին բեռը, վոր թազգված եր Հոկտեմբերյան շարժման որերին, այժմ նորից հանում են լույս աշխարհ՝ վաճառելու հույսով: Նոր տրոցկիզմը անհամեմատ մեզմ ե և չափավոր, քան հին տրոցկիզմը, բայց նա, անկատկած, պահպանել ե հին տրոցկիզմի բոլոր առանձնահատկությունները:

Պերմանենտ հեղափոխուրչյան խնդիրը: Նոր տրոցկիզմը անհրաժեշտ չի համարում բացահայտ կերպով պաշտպանել այդ թեորիան: Նա ուղղակի պնդում ե, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը ամբողջովին արդա-

րացրել ե պերմանենտ հեղափոխության գաղափարը: Այստեղից ել բխում ե տրոցկիստների թեորիան՝ լենինիզմը յերկու մասի ճեղքելու մասին. հին, մինչպատերազմյան լենինիզմը պիտանի չե իր՝ ‘պրոլետարիատի և գյուղացիության գիկատուրայի գաղափարով: Յեվ նոր, հետ-պատերազմյան, Հոկտեմբերյան լենինիզմ, վոր նկատի ունեն նրանք հարմարեցնել արտցկիզմի պահանջներին: Ինչ խոսք, վոր կուսակցությունը չի կարող հաշտավել այդ տարրորինակ թեորիայի հետ:

Կուսակցուրյան խնդիրը: Հին արոցկիզմը ջատում եր բայլշկիկյան կուսակցականությունը իր՝ մենշեվիկների հետ միաբանելու թեորիայի և պրակտիկի ոգությամբ: Բայց այդ թեորիան այնպես խայտառակից, վոր նրա մասին այժմ հիշել անգամ չեն ուզում: Կուսակցականությունը քանդելու համար ժամանակակից տրոցկիզմը հնարել ե նոր, վոչ այնքան ամոթալի և գրեթե «գեմոկրատական» հին կադրերին կուսակցական յերիտասարդությունը հակադրելու—թեորիան: Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր կուսակցության պատմության այդ ինքնորինակ սիեման—ե մեր կուսակցության հին և նոր կադրերի միջև յեղած միաբանությունը ջլատելու սիեմա, բայլշկիկյան կուսակցականությունը քանդելու սիեմա:

Բայց եվկիզմի լիգերների խնդիրը ուրաքանչիւն: Հին տրոցկիզմն աշխատում եր փառազրկել լենինին ավել կամ պակաս չափով բացարձակորեն, յերկյուղ չկրելով հետեանքներից: Նոր տրոցկիզմը վարդում ե ավելի զգույշ: Նա աշխատում ե հին տրոցկիզմի գործը կատարել լենինին գովելու և նրան մեծարելու յերեսութիւն առկա: Կուսակցությունը լենինին ճանաշաւմ

և վորպես անիմսա հեղափոխական։ Նա գիտի նաև, վոր լենինը զգույշ էր, չեր սիրում առաջվագուկներին և շատ անդամ իր կորովի ձեռքով զսպել և տերորով տարգուղներին, դժանց թվում ե իրեն Տրոցկուն։ Տրոցկին շոշափում ե այս խնդիրը իր «Լենինի մասին» գրքում։

Բայց նրա բնույթագրից ստացվում ե այն, թե Լենինը զրադաշտ էր միայն «ամեն մի հարմար դեմքում մարդկանց զլուխը մտցնել անխուսափելի տերորի միտքը»։ Ստացվում ե այն տպավորությունը, թե Լենինը բոլոր արյունաթթու բայց եփիներից ամենաարյունաթթուն եր։ Կուսակցությունը լենինին ճանաչում ե վորպես մեր ժամանակների մեծագույն մարքսիստի, խորունկ թերետիկի և շատ փորձված հեղափոխականի, հեռու ըլանկիդմի ստվերից անդամ։ Ընկ. Տրոցկին իր գըրքում շոշափում ե և այս խնդիրը, բայց նրա բնույթագրից ստացվում է վոչ թե հսկա լենին, այլ մի ինչ-վոր թզուկ-ըլանկիստ, վոր Հոկտեմբերյան որերին կուսակցությանը խորհուրդ ե տալիս իշխանությունը մերցնել սեփական ձեռքով, խորհրդից անկախ և նրա թիկունքում։

Ինչում ե կայանում նոր տրոցկիզմի վտանգը, նրանում, վոր տրոցկիզմը իր սիրքին բովանդակությամբ բոլոր հավանականություններն (շանսերը) ունի դառնալու լենտրոն և հավաքատեղի վոչ պրոլետարական տարրերի համար, վոր ձգտում են թուլացնել և կազմական պրելետարիատի դիկտատուրան։

Իսկ այսուհետեւ, վորմաք են կուսակցության հերթական անելիքները ընկ. Տրոցկու նոր գրական յելույթների հանդեպ։ Այժմ տրոցկիզմը հանդես ե գա-

լիս վորպեսզի վառագուրկ անի բալշեիզմը և քանդի նրա հիմքերը։

Կուսակցության գործը պիտի լինի՝ թաղել տրոցկիզմը վորպես գաղափարական հոսանք։

Խոսում են ոսպովիցիայի գեմ յեղած հալածանքների մասին, պառակտման հանրավորության մասին։ Դրանք գատարկ բաներ են։ Մեր կուսակցության մուր և հղոր ե, և նա թույլ չի տա վորեն կուսակտում։ Ինչ վերաբերում ե հալածանքներին՝ հալածանքներ չեն հարկավոր, այլ գակափարական ծալուն պայքար վերածնվող տրոցկիզմի դեմ։ Մենք ենք ցանկացել և չենք ձգտել զրական այս պայքարը։ Ընկ. Տրոցկին մեր վզին ե փաթաթում այն իր հակառակնենիան յելույթներով և մենք պատրաստ ենք ընդունելու քարը։





ՀՀ Ազգային գրադարան



NL0185645

123
129
Ua2252

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԻՆ

1. ♀. Զինովյեվ — Բայլչեփիզմ թհ
Տրոցկիզմ
2. Կամենյեվ — Լենինիզմ թհ Տրոց-
կիզմ:

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ